Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 30-ի N 818 - Լ որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Միջոցառում	Պատասխանատու կատարողները	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Անասնաբույժների վերապատրաստման դասընթացների անցկացման ծառայության ձեռքբերում	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն	յուրաքանչյուր տարի (անհրաժեշտու-թյան դեպքում)	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, կամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.	Հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, տեսչական մարմին, կազմակերպություն (համաձայնությամբ), Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), հիմնադրամներ (համաձայնությամբ)	յուրաքանչյուր տարի առաջին և երկրորդ եռամսյակ	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.	Ականջապիտակների, սեղմիչ ակցանների, ռադիոհաճա-խականության նույնականացման համակարգի (այսուհետ՝ RFID) գրանցող սարքի ձեռքբերում	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն	յուրաքանչյուր տարի (անհրաժեշտու-թյան դեպքում)	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, կամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.	Ծրագրով նախատեսված միջոցառման իրականացում	Կազմակերպություն (համաձայնությամբ)	յուրաքանչյուր տարի	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

5.	ԱՆԻ ՊԱԱ-ի սերվերի սպասարկում	Տեսչական մարմին	շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում
6.	ԱՆԻ ՊԱԱ-ի էլեկտրոնային տեղեկատվական համակարգի տեխնիկատեղեկատվական սպասարկում	Կազմակերպություն (համաձայնությամբ)	շարունակական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, կամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
7.	Արտահանման դեպքում ԱՆԻ ՊԱԱ-ից նույնականացման անհատական համարների ելքագրում	Տեսչական մարմին	շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում
8.	Հիվանդության ախտորոշում, հաստատում և նույնականացման անհատական համարների մուտքագրում ԱՆԻ ՊԱԱ համակարգ	«Հանրապետական անասնաբուժա-սանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ